ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀ ՇՄ ՀՄԱԱՊՁԲ-20/01»

ք. Գյումրի

«07» հոկտեմբերի 2020 թ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանը, ի դեմս ՀՀ Շիրակի մարզպետ Տ. Պետրոսյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<ԱՐԹՍ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն Ջ. Հակոբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում,

երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 6 729 192,0 (վեց միլիոն յոթ հարյուր քսանինն հազար հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման

ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը

կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է չորս էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ Շիրակի մարզպետարան | << ԱՐԹՍ ԳՐՈՒՊ >> ՍՊԸ |
| ք. Գյումրի Գ. Նժդեհի 16 | ՀՀ Շիրակի մարզ, Փոքր Մանթաշ 3փ.տ2 |
| ՀՀ ֆին. նախ. գործառնական վարչություն | <<Յունիբանկ >> ՓԲԸ |
| Հ/Հ ՀՎՀՀ 05507437 | Հ/Հ 2410902082810О ՀՎՀՀ 05547995 |
| ______________________ (ստորագրություն) | ______________________ (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1

«07» հոկտեմբերի 2020 թ. կնքված

«ՀՀ ՇՄ ՀՄԱԱՊՁԲ-20/01» ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ֆիրմային անվանում | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | |
| | | | | | | | | | Հասցեն** | Ժամկետը |
| 1 | 33141129 | դիմակ | ցանկացած | Դիմակ բժշկական պարտադիր պետք է լինի եռաշերտ, որից միջանկյալ շերտը լինի համապատասխան ֆիլտրային նյութից, ինչպես նաև պարտադիր քթի ֆիքսման հարմարանքը լինի ալյումինե սեղմիչով: Փաթեթավորումը մինչև 100հատ: Դիմակները պետք է արտադրված լինեն ԳՕՍՏ ԵՄ 13795-1-2011 ազգային ստանդարտին համապատասխան: | հատ | 19,0 | 6729192,0 | 354168 | Համաձայն կից ներկայացվող բաշխման ցանկի | Նախատեսվում է գնել 2020 թ՝ Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 10-րդ օրացուցային օրը ներառյալ, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: |

* Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

**Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Ապրանքների մատակարարումը՝ տեղափոխումը, բեռնաթափումը, իրականացնում է Վաճառողի կողմից իր միջոցների հաշվին, ըստ ուսումնական հաստատությունների /կից ներկայացվող բաշխման ցանկին համապատասխան/:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Շիրակի մարզպետարան
ք. Գյումրի Գ. Նժդեհի 16
ՀՀ ֆին. նախ. գործառնական վարչություն
Հ/Հ ՀՎՀՀ 05507437

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<< ԱՐԹՍ ԳՐՈՒՊ >> ՍՊԸ
ՀՀ Շիրակի մարզ, Փոքր Մանթաշ,3փ.տ2
<<Յունիբանկ >> ՓԲԸ
Հ/Հ 2410902082810 ՀՎՀՀ 05547995

(ստորագրություն)

Կ.Տ

** ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ

| հ/հ | Մարզ | Անվանումը | Հասցե | Դիմակների քանակը՝ հատ |
|---|---|---|---|---|
| 1. | Շիրակ | «Գյումրու N4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | ք. Գյումրի, Կամոյի 173 | 4400 |
| 2. | Շիրակ | «Գյումրու N5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | ք. Գյումրի, Ս. Մատնիշյան 301 | 3200 |
| 3. | Շիրակ | «Գյումրու N6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | ք. Գյումրի, Թումանյան 20 | 7600 |
| 4. | Շիրակ | «Գյումրու N7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | ք. Գյումրի Ալեք Մանուկյան 4 | 15600 |
| 5. | Շիրակ | «Գյումրու №8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | ք,Գյումրի, Լիսինյան 6 | 4100 |
| 6. | Շիրակ | «Գյումրու թիվ 9 հիմնական դպրոց » ՊՈԱԿ | Ք. Գյումրի Հաղթանակի 40 | 4700 |
| 7. | Շիրակ | «Գյումրու N10 հիմնական դպրոց » ՊՈԱԿ | ք.Գյումրի,Գորկու փ., 77 | 2800 |
| 8. | Շիրակ | «Գյումրու N11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | ք.Գյումրի Անի թաղ Ա.Խաչատրյան 27 | 15250 |
| 9. | Շիրակ | «Գյումրու №15 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | ք. Գյումրի, փ. Ձ. Եսայան 34/1 | 5100 |
| 10. | Շիրակ | «Գյումրու N18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | ք. Գյումի, Լազոյի 2 | 5400 |
| 11. | Շիրակ | «Գյումրու N19 հիմնական դպրոց' ՊՈԱԿ | ք.Գյումրի, Վ.Սարգսյան 13 | 4700 |
| 12. | Շիրակ | «Գյումրու N20 հիմնական դպրոց' ՊՈԱԿ | ք. Գյումրի Թետչերի 1 | 5200 |
| 13. | Շիրակ | «Գյումրու «Օյունջյան» միջնակարգ դպրոց-վարժարան» ՊՈԱԿ | ք. Գյումրի, Միեր Մկրտչյան 47 | 10000 |
| 14. | Շիրակ | «Գյումրու N 23 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | ք. Գյումրի, Մուշ 2թ, 9 փ 5 | 16000 |
| 15. | Շիրակ | «Գյումրու Գ.Սարյանի անվան համար 24 հիմնական դպրոց' ՊՈԱԿ | ք. Գյումրի,Շիրակացի 173 | 1850 |
| 16. | Շիրակ | «Գյումրու թիվ 25 հիմնական դպրոց' ՊՈԱԿ | ք. Գյումրի, Պուշկինի 101 | 9800 |
| 17. | Շիրակ | «Գյումրու N27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | ք. Գյումրի, Գարեգին Ա 6/16 | 4750 |
| 18. | Շիրակ | «Գյումրու N28 հիմնական դպրոց' ՊՈԱԿ | ք. Գյումրի, Երևանյան խճուղի 91 | 6200 |
| 19. | Շիրակ | «Գյումրու N29 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | ք.Գյումրի Մանուշյան 7 | 5800 |
| 20. | Շիրակ | «Գյումրու N30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | ք.Գյումրի Շչեդրինի 7 | 2350 |
| 21. | Շիրակ | «Գյումրու Գր. Լուսավորչի անվան N 31 հիմնական դպրոց' ՊՈԱԿ | ք. Գյումրի, Խրիմյան Հայրիկ I թաղամաս | 3350 |
| 22. | Շիրակ | .«Գյումրու N32 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | ք. Գյումրի, Կոմինտերնի 1 | 4850 |
| 23. | Շիրակ | «Գյումրու N38 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | ք. Գյումրի, Բուլվարային 7 | 3500 |
| 24. | Շիրակ | «Գյումրի N40 հիմնական դպրոց»ՊՈԱԿ | ք.Գյումրի,Ավստրիական թաղամաս,Ֆ.Վերֆելի հրապարակ 4 | 4100 |
| 25. | Շիրակ | «Գյումրու N41 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | ք.Գյումրի, Եղ.Չարենց 4 | 6850 |
| 26. | Շիրակ | «Գյումրու թիվ 43 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | ք.Գյումրի Շերամ 2 թաղամաս2-2Ա/6 | 450 |
| 27. | Շիրակ | «Ախուրյանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | Ախուրյան համայնք ,գ. Ախուրյանի Գյումրու խճ 16 | 5400 |
| 28. | Շիրակ | «Ախուրյանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | Ախուրյան համայնք, բնակավայր Ախուրյան, Ախուրյան խճ. 55 | 4800 |
| 29. | Շիրակ | «Ազատանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | գ. Ազատան փ.19 շ. 17 | 9350 |
| 30. | Շիրակ | «Մուսայելյանի Ռաշիդ Առաքելյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | գ. Բասեն 5փ. 8շենք | 2750 |
| 31. | Շիրակ | «Կամոյի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | գ. Կամո փող. 15 շենք 7 | 2100 |
| 32. | Շիրակ | «Առափիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | գ. Առափի փող , շենք 51/1 | 1700 |
| 33. | Շիրակ | «Ոսկեհասկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | գ. Ոսկեհասկ փողոց 11 շենք 27 | 2200 |
| 34. | Շիրակ | «Բենիամինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | գյուղ Բենիամին | 1000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 35. | Շիրակ | «Ջրառատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | Ախուրյան համայնք գ. Ջրառատ, 16 փ. 17 շենք | 1300 |
| 36. | Շիրակ | «Հացիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | Մարմաշեն համայնք,գյուղ Հացիկ,13 փողոց,1-ին փակուղի,3-րդ շենք | 1200 |
| 37. | Շիրակ | «Շիրակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | գ. Շիրակ, Գլխավոր փող. 1-ին փակուղի 44/10 | 1300 |
| 38. | Շիրակ | «Ջաջուռի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | Մարմաշեն համայնք,գյուղ Ջաջուռ փողոց 1 / շենք 57 | 1100 |
| 39. | Շիրակ | «Մեծ Սարիարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | Մարմաշեն համայնք գյուղ Մեծ Սարիար 5 փ. 2 2. | 450 |
| 40. | Շիրակ | «Լեռնուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | գ.Լեռնուտ 1փողոց շենք 15 | 150 |
| 41. | Շիրակ | «Ղարիբջանյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | Գյուղ Ղարիբջանյան,Գյումրի- Արմավիր մայրուղի N7 | 1500 |
| 42. | Շիրակ | «Գետքի գեներալ-մայոր Ա. Թ. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | Գետքի խճուղի 1/2 | 750 |
| 43. | Շիրակ | «Երազգավորսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | գ. Երազգավորս, 4-րդ փ. 50 շ. | 2350 |
| 44. | Շիրակ | «Բայանդուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | գյուղ Բայանդուր | 1200 |
| 45. | Շիրակ | «Ախուրիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | գ.Ախուրիկ 1-ին փողոց, փակուղի 1, շ.1 | 1200 |
| 46. | Շիրակ | «Մայիսյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | Մարմաշեն համայնք,գյուղ Մայիսյան, 4-րդ փողոց, շենք՝ 8 | 1650 |
| 47. | Շիրակ | «Քեթիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | Մարմաշեն համայնք,գյուղ Քեթի 3 փողոց, 5 փակուղի 6 շենք | 900 |
| 48. | Շիրակ | «Փոքրաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | Մարմաշեն համայնք գ. Փոքրաշեն 1ին փողոց թիվ 9 | 250 |
| 49. | Շիրակ | «Մարմաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | Մարմաշեն համայնք, գ. Մարմաշեն, փ 38, շ 27 | 2850 |
| 50. | Շիրակ | «Վահրամաբերդի Հարություն Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | Մարմաշեն համայնք, գ. Վահրամաբերդ, 16-րդ փողոց, 2-րդ շենք | 2150 |
| 51. | Շիրակ | «Կապսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | գյուղ Կապս, փողոց 11, շենք 10 | 700 |
| 52. | Շիրակ | «Նոր Ախուրյանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ | Ախուրյան համայնք, Յուրի Ղամբարյան փակուղի 1 | 350 |
| 53. | Շիրակ | «Հովիտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | գյուղ Հովիտ,1/59 | 800 |
| 54. | Շիրակ | «Կրաշենի հիմնական դպրոց» ՊՈԱԿ | գ. Կրաշեն 3փ 32 | 200 |
| 55. | Շիրակ | «Հովունիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | գ. Հովունի 1փող., 9շենք | 500 |
| 56. | Շիրակ | «Ջաջուռ կայարանի տարրական դպրոց» ՊՈԱԿ | գ. Ջաջուռավան 1 փ. 32 տնակ | 70 |
| 57. | Շիրակ | «Կառնուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | Ախուրյան համայնք, գյուղ Կառնուտ,Կամոյի խճ.12 | 1750 |
| 58. | Շիրակ | «Արևիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | գյուղ Արևիկ փողոց 1 շենք 4 | 2650 |
| 59. | Շիրակ | «Այգաբացի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | Ախուրյան համայնք,գ.Այգաբաց փողոց8 շենք16 | 1200 |
| 60. | Շիրակ | «Հայկավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | գ. Հայկավան, փ.1, նրբ.2, շ.7 | 1900 |
| 61. | Շիրակ | «Արթիկի №1 հիմնական դպրոց' ՊՈԱԿ | ք. Արթիկ, Թումանյան 34 | 6950 |
| 62. | Շիրակ | «Արթիկի №2 հիմնական դպրոց' ՊՈԱԿ | ք. Արթիկ, Անկախության 15 | 8150 |
| 63. | Շիրակ | «Արթիկի №4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | ք. Արթիկ, Հակոբյան 8 | 1750 |
| 64. | Շիրակ | «Արթիկի №5 հիմնական դպրոց' ՊՈԱԿ | ք. Արթիկ,Շինարարների 11 | 3700 |
| 65. | Շիրակ | «Արթիկի №6 հիմնական դպրոց' ՊՈԱԿ | ք. Արթիկ, Շիրազի 8 | 2700 |
| 66. | Շիրակ | «Արթիկի №8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | ք. Արթիկ, Լմբատ 2 թաղ., Թամանյան 10 փ. | 1900 |
| 67. | Շիրակ | «Արթիկի երեկոյան դպրոց' ՊՈԱԿ | գ. Հառիճ | 250 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 68. | Շիրակ | «Պեմզաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | գ. Պեմզաշեն 1 փողոց, 2շենք | 5300 |
| 69. | Շիրակ | «Լեռնակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | գյուղ Լեռնակերտ 2փ.,2-րդ նրբ., շենք 5 | 1700 |
| 70. | Շիրակ | «Հոռոմի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | գ. Հոռոմ 8-րդ փողոց շենք 43 | 3300 |
| 71. | Շիրակ | «Փանիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | գ. Փանիկ, 2-րդ փողոց, 2 | 4600 |
| 72. | Շիրակ | «Անուշավանի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ | գյուղ Անուշավան,7փողոց, 23 շին. | 3250 |
| 73. | Շիրակ | «Արևշատի Մետաքսեի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | գ.Արևշատ,8փ.,5շ. | 3150 |
| 74. | Շիրակ | «Մեծ Մանթաշի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ | գյուղ Մեծ Մանթաշ, 7 փողոց, 1 շենք | 3600 |
| 75. | Շիրակ | «Փոքր Մանթաշի միջն. դպրոց» ՊՈԱԿ | գյուղ Փոքր Մանթաշ, 1փ 38 շենք | 4100 |
| 76. | Շիրակ | «Սարատակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | գյուղ Սարատակ 1 փ., շենք 81 | 2300 |
| 77. | Շիրակ | «Լուսակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | գյուղ Լուսակերտ,6փ.5շ. | 650 |
| 78. | Շիրակ | «Մեղրաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | գ.Մեղրաշեն | 1650 |
